

Բարձրագույն և հետբուհական կրթության զարգացման սկզբունքային մոտեցումներ

Նախաբան

21-րդ դարում համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական հրամայականը ինտելեկտի և գիտելիքների վրա հիմնված հասարակության ձևավորումն է, որի համատեքստում պետական ու ազգային կարևորագույն խնդիրներից մեկն է բարձրագույն և հետբուհական կրթության (այսուհետ՝ ԲՀԿ) համակարգի ուղղորդումը դեպի «գիտելիքահեն տնտեսության» պահանջների ապահովումը, համակարգի առաջանցիկ զարգացումն ու միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը, ինչպես նաև ինտեգրումը եվրոպական բարձրագույն կրթության տարածաշրջանին՝ Բոլոնիայի գործընթացի շրջանակում:

Նպատակ

ԲՀԿ զարգացման նպատակն է՝ առաջադեմ, գիտելիքահեն, ժամանակակից հասարակության և տնտեսության պահանջներին համապատասխանող, մրցունակ, մատչելի, բարձրորակ կրթությամբ մասնագետներ պատրաստող համակարգի ձևավորումը:

ԲՀԿ զարգացման խնդիրներն են.

- ԲՀԿ համակարգի ինտեգրում ԲԿ եվրոպական տարածաշրջանին;
- Որակյալ և մրցունակ կրթության ապահովում;
- ԲՀԿ մատչելիության բարձրացում և հասանելիության ապահովում հասարակության տարբեր սոցիալական խմբերի համար;
- ԲՀԿ համապատասխանեցում հասարակության և տնտեսության պահանջներին;
- ԲՀԿ համակարգի կառավարման և ֆինանսավորման մեխանիզմների արդիականացում և բարելավում:

ԲՀԿ համակարգի զարգացման ուղղություններն ու սկզբունքները.

1. Շարժունություն և կրեդիտների կուտակման ու փոխանցման համակարգերի կատարելագործում՝ որպես շարժունության ապահովման կարևոր գործիք.

- i. Ուսանողների և դասախոսների շարժունության ապահովման նպատակով օտարերկրյա առաջատար բուհերի հետ փոխանակման և վերապատրաստման ծրագրերի ծավալների ընդլայնում, ուսանողներին և բուհերին նպատակային կրթաթոշակների և դրամաշնորհների տրամադրում,
- ii. Կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի կատարելագործում՝ որպես շարժունությունը ապահովող գործիք՝ հաշվի առնելով եվրոպական առաջադեմ փորձը;

2. Որակավորումների ճանաչում և որակավորումների ազգային համակարգի ստեղծում ու ներդրում.

- i. Որակավորումների ազգային համակարգի համադրելիության ապահովում Որակավորումների եվրոպական շրջանակին;
- ii. Դիպլոմի միասնական հավելվածի կիրառելիության ապահովում պետական և ոչ պետական բուհերում;
- iii. Գիտելիքահեն տնտեսության և աշխատաշուկայի պահանջներին և կարիքներին համապատասխան ուսումնական ծրագրերի վերանայում և արդիականացում, պետական կրթական չափորոշիչների ներդրում՝ աշխատաշուկայի և այլ շահառու կողմերի հետ հետադարձ կապի ապահովման և այլ մեխանիզմների միջոցով;

3. ԲՀԿ որակի ապահովման ներքին և արտաքին մեխանիզմների ստեղծում և ամրապնդում.

- i. Որակի ապահովման ազգային չափանիշների և ուղեցույցների մշակում և փաստացի ներդրում՝ համաձայն որակի ապահովման եվրոպական չափանիշների և ուղեցույցների և համապատասխան իրավական դաշտի ձևավորում;
- ii. Ներբուհական որակի ապահովման նկատմամբ բուհերի պատասխանատվության բարձրացում՝ համապատասխան որակի ապահովման ներքին համակարգի կատարելագործման միջոցով;
- iii. Բուհերի լիցենզավորման սկզբունքների վերանայում՝ բուհերի կողմից կրթության կազմակերպման որակական շեմային չափանիշը եվրոպական լավագույն փորձին և լիցենզավորման սկզբունքներին համապատասխանեցնելու նպատակով;

4. ՀՀ պեդական և ոչ պեդական բուհերի գործունեության համար առողջ մրցակցային դաշտի և հավասար հնարավորությունների ստեղծում, լիցենզավորման պայմանների և պահանջների վերանայում.

- i. Բարձրագույն կրթության առաջարկի արդյունավետ վարքագծի ձևավորում՝ խրախուսելով բուհերի միջև մրցակցությունը և նրանց ինքնուրույնությունը, հատկապես որակի ուղղությամբ;
- ii. Բարձրագույն ուսումնական հաստատությունների լիցենզավորման պարտադիր պահանջների ու պայմանների խստացում և դրա ապահովման ուղղությամբ վերահսկողության մեխանիզմների մշակում և հստակեցում;
- iii. Հավատարմագրված կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բուհերի ֆինանսավորման տարատեսակ հնարավորությունների ստեղծում՝ ներառյալ պետական կրթաթոշակների, նպաստների և այլ նպատակային ֆինանսավորումների տրամադրման միջոցով;

5. ԲՀԿ կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծում.

- i. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում ԲՀԿ տեղեկատվական համակարգի ձևավորման և նրա միջոցով համակարգի արդյունավետ կառավարման նպատակով;

6. ԲՀԿ ֆինանսավորման կայուն համակարգի ներդրում.

- i. Ըստ մասնագիտությունների՝ վարձավճարների իրական գնագոյացման քաղաքականության մշակում և կիրառում, ուսանողի ուսման ուղղակի ծախսերի արդյունավետ կառավարման և այդ ծախսերով պայմանավորված որակի բարձրացմանը միտված քաղաքականության մշակում և ներդրում;
- ii. Ուսանողի աջակցման ծառայությունների և նոր մեխանիզմների ներդրում, ներառյալ ֆինանսական աջակցությունը՝ ուսանողական վարկերի կամ այլ ֆինանսական ծառայությունների միջոցով;
- iii. Ֆինանսական լծակների կիրառմամբ ուսանողի գիտակցված պահանջարկի ձևավորում բարձրագույն կրթության նկատմամբ՝ խրախուսելով ուսանողի գիտակից և կշռադատված որոշման կայացումը՝ մասնագիտական ուղղվածություն ընտրելիս;
- iv. ԲՀԿ համակարգի ֆինանսական կառավարման բարելավում, ներառյալ պետական միջոցների արդյունավետ օգտագործումը, պահանջարկի (սովորողների) և առաջարկի (բուհերի) ֆինանսավորման տարանջատում, ֆինանսավորման հետևյալ մեխանիզմների կիրառում. (ա) պահանջարկի ֆինանսավորում պետության կողմից կարիքավորության ու առաջադիմության հիման վրա տրամադրվող նպաստների, մասնագիտական ուղղվածության կրթաթոշակների, գերազանցության կրթաթոշակների և սոցիալական որոշ խմբերին աջակցության ծրագրերի միջոցով, (բ) պահանջարկի ֆինանսավորում բուհերի կողմից վարձավճարների զեղչերի, վճարների հետաձգման և ֆինանսական երաշխիքների տրամադրման միջոցով, (գ) պահանջարկի ֆինանսավորում ընտանիքների կողմից իրենց միջոցների հաշվին, ծնողներին տրվող կարճաժամկետ սպառողական վարկերի և ուսանողներին տրվող երկարաժամկետ ուսանողական վարկերի¹ միջոցով;

¹ Ուսանողների և ընտանիքների պահանջարկի ֆինանսավորման շրջանակներում առաջարկվում է ուսանողական վարկերի ներդրում, սակայն, միջնաժամկետ հեռանկարում խուսափելով պետության կողմից լայնամասշտաբ ուսանողական վարկային ծրագիր իրականացնելուց: Առավել նպաստավոր է պետության խրախուսմամբ, սակայն միջազգային դոնորների համապատասխան աջակցությամբ և ներդրմամբ, այն հիմնել որպես “միջազգային ծրագիր”, որը սկզբնական փուլում չի հետապնդի սոցիալական նպատակներ և մասշտաբի էֆեկտ, ինչպես նաև չի ենթադրի պետական մասնակցությամբ կենտրոնացված վարկային վարչարարություն: Վարչարարական և վարկերի սպասարկման գործառույթները առաջարկվում է հնարավորինս առհանձնել բանկերին և բուհերին՝ նրանց հետ համաձայնված համագործակցության միջոցով: Ուսանողական վարկային համակարգը մշակելիս առաջնային կարևորություն կտրվի վարկավորման տեխնոլոգիային՝ ներդրումային ֆինանսավորման սկզբունքներով, որի կետրոնական նպատակը կլինի իրականացնել ներդրում մարդկային կապիտալում՝ գնահատելով դրանից սպասվելիք արդյունքը՝ ապագա շրջանավարտը իր աշխատանքով:

7. Ուսումնական հաստատությունների կառավարման, այդ թվում կադրային քաղաքականության թափանցիկության, հրապարակայնության, օրինականության և հաշվետվողականության համակարգերի կատարելագործում.

- i. ԲՀԿ համակարգի կառավարման արդյունավետության բարելավում՝ բոլոր ներգրավված ռեսուրսների, այդ թվում՝ պետական միջոցների արդյունավետ օգտագործման, ենթակառուցվածքային բարեփոխումների՝ բուհերի, ֆակուլտետների կամ մասնագիտությունների միաձուլման և այլ ուղղություններով;
- ii. Բուհական ինքնավարության և հաշվետվողականության հավասարակշռված համակարգի ամրապնդում և կատարելագործում՝ համապատասխան օրենսդրական դաշտի և մեխանիզմների ստեղծման միջոցով՝ բուհերում գործունեության պլանավորման և վերահսկման գործընթացների բարելավման, պատասխանատվության և հաշվետվողականության բարձրացման նպատակով;
- iii. Բուհերի տեսակների ու տարածքային բաշխվածության սկզբունքների հստակեցում՝ ապահովելով դրանց ֆինանսավորման և կառավարման արդյունավետությունը, ինչպես նաև համապատասխանությունը մարզային սոցիալ-տնտեսական զարգացման կարիքներին և հասարակության կրթական պահանջմունքներին:

8. ԲՀԿ ոլորտում ակադեմիական ազատության և ուսանողների ազատության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում:

- i. Ակադեմիական ազատության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի շրջանակներում և վերջիններիս մասնագիտական որակի մակարդակի վերաբերյալ աշխատակիցների և ուսանողների կողմից կարծիքների հավաքագրման սկզբունքների կիրառում: